# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

--------- ---------------- 2020  թվականի  N    - Ն

**Հայաստանի Հանրապետության ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ**

**ԱՊՐԻԼԻ 17-Ի n 534-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N 534-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունից հանել «Հայաստանի Հանրապետության լեռնային կամ բարձրլեռնային կամ սահմանամերձ գյուղական» բառերը.

2) որոշման N 16 հավելվածի՝

ա.  5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 23-րդ կետում «աջակցությունը» բառը փոխարինել «աջակցության առավելագույն արժեքը 1,350.0 հազար դրամ է, որը» բառերով,

գ. 53-րդ կետում «աջակցությունը» բառը փոխարինել «աջակցության առավելագույն արժեքը 1,200.0 հազար դրամ է, որը» բառերով.

3) որոշման N 21 հավելվածի՝

ա. 4-րդ կետը լրացնել նոր՝ 7-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«7) անտառների վերականգնման, անտառապատման, խնամքի իրականացման աշխատանքները:»,

բ. 16-րդ կետը «հաշվին» բառից հետո լրացնել «կամ օրենքով չարգելված այլ աղբյուրներից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: